

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԵԱՀԿ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

19.04.2016 14:03



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացնում է «**Անվճար իրավաբանական**

խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագիրը, որի մայիս ամսվա համար իրականացվող փուլին մասնակցելու համար հայտարարվում է **մրցույթ**:

Ծրագիրը ներառում է 3 ինքնուրույն բաղադրիչներ (ուղղություններ).

ա) **անվճար իրավաբանական խորհրդատվություն մարզերում (բաղադրիչ 1).**

բ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն քրեակատարողական հիմնարկներում (բաղադրիչ 2).**

գ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն վարորդներին (բաղադրիչ 3):**

Բաղադրիչ 1.

Մայիս ամսվա ընթացքում Արարատի մարզ այցելություններ կազմակերպելու և քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **Երևան քաղաքից թվով 2 փաստաբան, Արարատի մարզից թվով 1 փաստաբան** ընտրելու համար **(1-ին խումբ)**:

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քաղաքացիաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները **Երևանից և Արարատի մարզից**:

Բաղադրիչ 2.

Մայիս ամսվա ընթացքում «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ այցելություններ կազմակերպելու և ազատազրկման մեջ գտնվող անձանց իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 3 փաստաբաններ** ընտրելու համար **(1-ին խումբ)**:

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քրեաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները:

Բաղադրիչ 3.

Մայիս ամսվա ընթացքում վարորդներին անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 3 փաստաբաններ** ընտրելու համար **(1-ին խումբ)**:

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **վարչաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ (էլեկտրոնային նամակ)՝ կցելով 2եր ինքնակենսագրությունը (CV) անգլերեն և հայերեն

լեզուներով` այն ուղարկելով info@advocates.am կամ lyudvik.davtyan@gmail.com էլեկտրոնային հասցեներին:

Դիմում-հայտերը և կից փաստաթղթերը չչ փաստաբանների պալատ կարող են ներկայացվել նաև փաստաթղթային եղանակով:

Դիմում-հայտի առարկայի տողում անհրաժեշտ է նշել այն բաղադրիչը, որին մասնակցելու համար ներկայացվում է հայտը, ինչպես նաև այն մարզը, որտեղ գործունեություն է իրականացնում դիմող փաստաբանը:

Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի մայիսի 4-ը:

«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագրի բովանդակությունը, ծրագրին մասնակցող փաստաբաններին ներկայացվող պահանջները, մրցույթի կազմակերպման հետ կապված մանրամասները նկարագրված են **ծրագրում:**

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող փաստաբան Լյուդվիկ Դավթյանի հետ:

**Ծրագրի համակարգող`
Լյուդվիկ Դավթյան**

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու
Հեռ.՝ 091 066 880, 098 828 098
Էլ. փոստ՝ lyudvik.davtyan@gmail.com

Առաջարկվող նորություններ



17.05.2016 «ԱՆՎԾԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



14.06.2016 «ԱՆՎԾԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



14.07.2016 «ԱՆՎԾԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



13.09.2016 «ԱՆՎԵԱՐ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ»
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```